



Աջակցություն Հայաստան-Թուրքիա հարաբերությունների բարելավմանը

Համառոտ եռամսյակային զեկույց

2011 թ. հունվար – մարտ

2011թ. ձմռան և գարնան շրջանում Հայաստան-Թուրքիա հարաբերությունների բարելավման գործընթացում առաջխաղացում չի նկատվել: Երկու երկրների քաղաքական վերլուծաբանների կանխատեսումներով հաջորդող եռամսյակում ևս որևէ փոփոխություն չի ակնկալվում՝ հաշվի առնելով ապրիլի 24-ի շուրջ փոխադարձ թշնամական հայտարարությունների աճը և կարևոր ներքաղաքական գործընթացները, օրինակ՝ 2011թ. հունիսին Թուրքիայում սպասվող խորհրդարանական ընտրությունները: Գոյություն ունեն մի շարք այլ ներքին և արտաքին գործոններ, ինչպիսիք են Թուրքիայում ընթացող սահմանադրական բարեփոխումները և արաբական աշխարհում մոլեգնող ապստամբությունները, որոնց պատճառով հայ-թուրքական մերձեցման գործընթացը կորցնում է իր առաջնահերթությունը:

Միաժամանակ, հաշվի առնելով հայ-թուրքական մերձեցման գործընթացի ներկայիս կարգավիճակի արդյունքում առաջացած քաղաքական մարտահրավերները և սահմանափակումները՝ «Աջակցություն Հայաստան-Թուրքիա հարաբերությունների բարելավմանը» ծրագիրը, սեփական գործունեության արդյունավետությունն ապահովելու նպատակով, փորձում է ստեղծված իրավիճակին հարմարացնել իր ծրագրային մոտեցումը: Կոնսորցիումն ուսումնասիրում է ապագա զարգացումների հնարավոր տարբերակները, ինչպես նաև հաշվի է առնում երկու երկրների քաղաքական, գործնական և քաղաքացիական հասարակության շահառուների այն հետաքրքրություններն ու առաջնահերթությունները, որոնք կարող են մոտակա եռամսյակներում ազդել ծրագրի աշխատանքային միջավայրի վրա:

Երկրորդ եռամսյակում ծրագրի յուրաքանչյուր ուղղության գծով նախատեսված մի շարք միջոցառումներում արձանագրվել է առաջընթաց: Ստորև ներկայացվում է միջոցառումների ոչ սպառիչ ցանկը: Բիզնեսի ասպարեզում առաջնորդների հարցման հետազոտական բաղադրիչն իրականացվել է ինչպես Թուրքիայում, այնպես էլ Հայաստանում: Ակնկալվում է, որ երկու երկրների գործարար շրջանակները, ինչպես նաև տեղացի և միջազգային շահառուները կկարողանան օգտագործել հետազոտության արդյունքներն իրենց համագործակցության ռազմավարական պլանավորման համար: Երևանի մամուլի ակումբի և Իզմիրի համալսարանի հետազոտական թիմերը պատրաստվում են ավարտել լրատվամիջոցների կողմնակալության մասին ուսումնասիրության նախնական տարբերակը, որը լրատվամիջոցներում ներգրավված շահառուներին թույլ կտա ավելի լավ կենտրոնանալ 2008-2010թթ. շրջանում իրադարձությունների փոխադարձ լուսաբանման նվաճումների և թերությունների վրա: 2011թ. հունվարին «Facebook» սոցիալական ցանցում բացվեց «4-րդ ալիք. Թուրքիա-Հայաստան» խորագրով էջը, որը ներկայումս ունի ավելի քան 160 անդամ: Էջի նպատակն է

համացանցից օգտվող և հայ-թուրքական մերձեցման գործընթացում հետաքրքրված անձանց հնարավորություն ընձեռել այս հարցի շուրջ ստանալու բազմակարծիք տեղեկատվություն, ինչպես նաև հարթակ դառնալ բաց քննարկումների համար: Հայաստան-Թուրքիա «բաց դռներով» դրամաշնորհների ծրագրի շրջանակներում ստացվել է ավելի քան 20 հարցում ու առաջարկ, որոնք քաղաքացիական հասարակությունը, լրատվամիջոցները և գործարար համայնքը ներկայացնող հայ և թուրք շահառուների նորարար մտեցումների շնորհիվ ավելի մեծ հնարավորություններ են ընձեռում Հայաստան-Թուրքիա երկխոսությունը խթանելու համար: 2011թ. մարտին Հայաստանում «Երկիր Մեդիա» հեռուստատալիքով նկարահանվել և հեռարձակվել է առաջին հեռուստահաղորդումը թուրք հյուրի մասնակցությամբ՝ հանդիսատեսին հնարավորություն տալով ավելի լավ տեղեկանալ թուրքական դիրքորոշման մասին: Ստեղծվել է պիլոտային երեք երիտասարդական բանկ՝ երկուսը Ստամբուլում, իսկ մեկը՝ Սամսունում (Թուրքիա), ինչը երկխոսության հաստատման առաջին քայլը դարձավ հայ և թուրք երիտասարդների միջև՝ նրանց հնարավորություն տալով կիսվել երկու երկրներում երիտասարդների կողմից առաջնորդվող զարգացման իրենց փորձով և լավագույն ընթացակարգերով: Փորձագետների քննարկումներից բխող քաղաքականությունների համառոտագրերը, քաղաքապետարանների միջև հանդիպումները, ինչպես նաև հայ և թուրք քաղաքական վերլուծաբանների մասնակցությամբ տեսաքննարկումները, ավելի լավ պայմաններ են ստեղծում փորձագետներին ու քաղաքական գործիչներին հայ-թուրքական մերձեցման գործընթացում դրականորեն ներգրավվելու համար:

Ծրագրի իրագործման անցյալ եռամսյակում հայտնաբերված բացերը լրացնելու ուղղությամբ հատուկ քայլեր են ձեռնարկվել. առաջխաղացում կա ներկայումս իրականացվող կամ վերջերս ավարտված հայ-թուրքական ծրագրերի վերաբերյալ համալիր տվյալների բազա ստեղծելու գործում: Ծրագրերի և կազմակերպությունների ցանկի վերլուծության հիման վրա կորոշվեն համատեղ աշխատանքի հնարավորությունները, կհայտնաբերվեն բացերն ու ընդհանուր եզրերը: Այնուհետև այս տվյալները կտրամադրվեն բոլոր շահառուներին, կհրապարակվեն կայքէջում և ավելի կընդլայնվեն: 2011թ. ապրիլին Երևանում կանցկացվի հանդիպում, որը նպատակ կունենա միավորելու հայ-թուրքական երկխոսության խթանող բոլոր հայ կազմակերպություններին: Երևանում անցկացված հանդիպման արդյունքների հիման վրա՝ մեկ այլ նմանատիպ հանդիպում է անցկացվելու Ստամբուլում թուրքական կազմակերպությունների համար, իսկ հայ-թուրքական գործընթացով հետաքրքրվող դոնոր կազմակերպությունների համար կազմակերպվելու է համակարգման ժողով: Որոշ նախապատրաստական աշխատանք է տարվել երկխոսության գործընթացին մասնակցող մի քանի առանցքային հայ և թուրք շահառուների հետ հարցազրույցներ կազմակերպելու ուղղությամբ: Միջազգային խորհրդատու Սվեն Բեռնենդտի կողմից իրականացվող խորհրդատվական աջակցության նպատակն է օգնել Եվրասիա համագործակցություն հիմնադրամին և կոնսորցիումին փնտրելու հայ-թուրքական երկխոսության նոր հնարավորություններ, գտնելու համատեղ ծրագրերի գաղափարներ, ինչպես նաև ձևակերպելու երկխոսության գործընթացին մասնակցող շահառուներին ուղղված ուղերձները:

Ծրագրի ընթացքին զուգահեռ՝ կոնկրետ քայլեր են ձեռնարկվում ծրագրի տարբեր բաղադրիչների միջև կապ ապահովելու ուղղությամբ: Կոնսորցիումի անդամները մեծ ջանքեր են գործադրում հայ-թուրքական նախաձեռնության այլ դերակատարների միջև գործողությունները համակարգելու համար: Օրինակ, արդյունավետ համագործակցություն է հաստատվել ԱՄՆ Միջազգային զարգացման գործակալության կողմից ֆինանսավորվող «Աջակցություն Հայաստան-Թուրքիա հարաբերությունների բարելավմանը» ծրագրի և «Ինտերնյուզ» ցանցի կողմից իրականացվող և ԱՄՆ Պետքարտուղարության Ժողովրդավարության, մարդու իրավունքների և աշխատանքի գրասենյակի կողմից սատարվող «Հայաստանի և Թուրքիայի միջև երկխոսության հաստատում»

ծրագրի միջև: Այս գործընթացին նպաստում է այն հանգամանքը, որ կոնսորցիումին անդամակցող կազմակերպություններից մեկը՝ Երևանի մամուլի ակումբը և Թուրքիայում ծրագրի հիմնական գործընկերներից մեկը՝ Համաշխարհային քաղաքական միտումների կենտրոնը, ներգրավված են որպես իրականացնող գործընկերներ ԱՄՆ Պետքարտուղարության Ժողովրդավարության, մարդու իրավունքների և աշխատանքի գրասենյակի կողմից աջակցվող ծրագրում:

Ծրագրային ներդրումների ու ռեսուրսների առավել արդյունավետ օգտագործումից բացի՝ հայ-թուրքական բոլոր նախաձեռնություններում իրականացվող գործողությունների և դրանց մասնակիցների միջև կապերի հաստատումն օգնում է միավորել և ընդլայնել ստացված արդյունքները՝ հատելով առանձին ծրագրերի սահմանները: Այս գործընթացի նպատակն է ձևավորել փոխադարձ հարաբերությունների և արդյունքների առավել մեծ շրջանակ՝ հասցնելով հայ-թուրքական նախաձեռնություններն այլ որակական մակարդակի:

ԱՄՆ Միջազգային զարգացման գործակալությունը և կոնսորցիումի անդամներն աջակցում են հայ-թուրքական մերձեցման գործընթացին՝ նպաստելով քաղաքացիական հասարակության խմբերի միջև կապերի ստեղծմանը, բիզնեսի ասպարեցում գործընկերության ձևավորմանը, տարածաշրջանային մասնագիտական ցանցերի հաստատմանն ու զարգացմանը, ինչպես նաև տարածաշրջանում մարդկանց միջև ավելի լավ փոխըմբռնման կայացմանը՝ հանուն խաղաղության և տնտեսական ինտեգրման:

Սույն զեկույցի բովանդակության համար միակ պատասխանատուն կոնսորցիումն է, իսկ այստեղ պարունակվող հայացքներն անպայմանորեն չեն արտացոլում ԱՄՆ Միջազգային զարգացման գործակալության կամ ԱՄՆ կառավարության հայացքները: